XXI

ԳՐԻԳՈՐ ԵՎ ՈՒՐԱԽ ԿԱՐԻՆՑԻՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (XVIII Դ.)

Առաջարկվող անխորագիր ժամանակագրությունը (№ 7715 ժողովածու, էջ 102բ—106բ) սկսվում է 1661 թ. ումն Գրիգորի ծննդյան և վերջանում 1742 թ., երևի սրա թոռ Գրիգորի մահվան հիշատակությամբ։

Սույն ժամանակագրությունը կազմել են երկու անձնավորություն՝ տարբեր ձեռագրերով, որ հաստատվում է նաև առանձին վկայություններով։

Ժամանակագրության առաջին մասը՝ 1661—1710 թ. թ. (102բ—103բ էջերը) կազմել է ավագ Գրիգորը, որն ինչ որ վանքում ոսանելուց հետո 1685 թվականից հաստատվում է Կարինում և այստեղ էլ հավանորեն կազմում իր ժամանակագրությունը։

Երկրորդ մասը, որ ընդգրկում է 1719—1742 թ. թ. դեպքերը (104ա—106բ էջերը) կազմել է Ուրախը (Ուրախությունը), որն իր մասին գրում է. «Թվին ՌՃՀԴ (1725) փետրվարի Բ (2) օրն... Ուրախս ամուսնացայ...»։

Վերջինս առաջին մասի հեղինակ Գրիգորի որդին է։

Ժամանակագրությունը փաստորեն 82 տարվա ընթացքում մի ընտանիքում ծնվածների և մահացածների գրանցում է։

Թվին ՌՃԺ (1661) փետրվարի ԻԲ (22) օրն ես՝ Գրիգորս մօրէս ընծայեցայ։ 102բ

Թվին ՌՃԻԷ (1678) ապրիլի Ը (8) օրն ելի ի աշխարհէս և ղնայի վանքն սուրբ ի կարդալ։

Թվին ՌՃԼԴ (1685) յունիսի ԻԸ (28) օրն ելի ի վանիցն և Արղրում քաղաք եկի։

Թվին ՌՃԼԶ (1687) նոյեմբերի Ա (1) օրն, աստուծոյ հրամանի վրայ աշխարհի ամուսնացայ։

Թվին ՌՃԼԷ (1688) նոյեմբերի Գ (3) օրն աստուծոյ հրամանով արու տղայ մի եղաւ, ապա մեռաւ։

Թվին ՌՃԼԸ (1689) սեպտեմբերի Ա (1), օրն կիրակի, Աննա անուն Ա (1) աղջիկ մի եղաւ, ԺԶ (16) օր ապրեցաւ, մեռ[աւ]։

Թվին ՌՃԼԸ (1689) նոյեմբերի Ա (1) օրն, շաբաթ օր, մարիկս աշխարէս փոխեցաւ։

Թվին ՌՃԻ (1671) մարտի ԻԹ (29), օրն հինգշաբթի, Խաթունճանն աշխարհ եկաւ։

Թվին ՌՃԼԹ (1690) Սիմաւոն անուն տղա մի եղաւ, ԺԲ (12) օր ապրեցաւ առ աստուած փոխեցաւ։[1]

Թվին ՌՃԽԱ[2] (1692) նոյեմբերի ամսոյ Ա (1) օրն, որ լուսինն այլ Ա (1) աւուր էր, երկուշաբթի երիկունն Ուրախութիւնն մօրէն ընծայեցաւ և աշխարհ եկաւ։ 103ա

Թվին ՌՃԽԴ (1694) յուլիսի ԺԵ (15) օրն Լուսաւորչու եկեղեցին շինեցաւ։

Թվին ՌՃԽԵ (1696) հոկտեմբերի ամսոյ Ե (5) օրն, որ լուսինն այլ Ի (20) աւուր էր, արեգակն ի կշեռն էր, երկուշաբթի յերիկունն Ասանեթն մօրէն ընծայեցաւ և աշխարհ եկաւ։

Թվին ՌՃԽԹ (1700) յունվարի ԻԴ (23), օրն չորեքշաբաթի, Թ (9) սահաթին, Խաղաղութիւնն մօրէն ընծա[յ]եցաւ և աշխարհ եկաւ, որ լուսինն այլ ԺԴ (13) աւուր էր. Բ (2) տարի ապրեցաւ, ծաղիկ հանեց, ղնաց առ ըստեղծողն իւր։

Թվին ՌՃԾԲ (1703) յուլիսի Ժ (10) օրն Աստրովգն մօրէն ընծայեցաւ և աշխարհ եկաւ, որ լուսինն այլ Ը (8) աւուր էր, մկրտեցինք, սուն բերինք, էն գիշերն առ աստուած փոխեցաւ։ 103բ

Թվին Քրիստոսի ՌՃԾԴ (1704), իսկ Հայոց ՌՃԾԴ (1704) յուլիսի ԺԵ (15) օրն, Վարդավառի պասմտի շաբաթ օրն, յետի ժամէն յետ, որ լուսին[ն] այլ ԻԴ (23) աւուր էր, Օգոստինոսն

մոլէն ընծայիցաւ շնորհօքն Քրիստոսի և աշխարհ եկաւ, մէկ ամ․ րէն մէկ օր պակաս ապրեցաւ, փորն ցաւեցաւ, գնաց առ ըստեղծողն իւր։

Թվին ՌՃԾԵ (1706) նոյեմբերի ԺԸ (18) օրն Օղուրխաթունն մօրէն ընծայեցաւ և աշխարհ եկաւ. որ օրն էր երկուշաբթի, հետ լուսուն, որ լուսինն ԻԲ (22) աւուր էր, արեգակն ի կոյսն էր։

Թվին ՌՃԾԹ (1710) սեպտեմբերի ԻԴ (24), օրն կիրակ[ի], Արղրում բերթի միջի չարոււնհրն հրեցաւ՝ սառաճոցէն մինչև ի պապուջչնոցն, ադրնոցն, պիչտիչնոցն, քուրչնոցն ամէնն այրեցաւ։[3]

Թվին[4] ՌՃԿԸ (1719) յունիսի ամսոյն Արզրում մեծ շարժ 104ա եղաւ, մէկ տարի յետ Թաւրէզ եղաւ։

Թվին ՌՃՀԳ (1724) սեպտեմբերի ԺԴ (14) օրն մայրս առ աստուած փոխեցաւ։

Թվին ՌՃՀԴ (1725) փետրվարի Բ (2) օրն, աստուծոյ հրամանօքն Ուրախս ամուսնացայ մղասի Պօղոսի դուստր Ալմաս առի ինձ ի կնութիւն, Գ (3) ամիս ապրեցաւ Ալմասն [և] առ աստուած փոխեցաւ։ 104բ

Թվին ՌՃՀԴ (1725) դեկտեմբերի Զ (6) օրն աստուծոյ հրամանովն կրկին ամուսնացայ և առի ինձ կնութեան Ագուլեցի Գրիգորի դուստր Աննան. և խնդրեմ ի տեառնէ իմէ, Յիսուսէ միջնորդութեամբ մօր նորա, կուսին Մարիամու, որ զմեզ ի միասին հասուցանէ մինչ ի խորին ծերութիւնն բարի կենօք. ամէն։

Թվին ՌՃՀԵ (1726) սեպտեմբերի ԺԳ (13) օրն Ասանէթն աս աստուած փոխեցաւ։

Թվին ՌՃՀԷ (1728) սեպտեմբերի Ի (20) օրն Նռանան առ աստուած փոխեցաւ։ 105ա

Թվին ՌՃՀԹ (1730) հոկտեմբերի ԻԵ (25) օրն Պետրոսն մօրէն ընծայեցաւ և աշխարհ եկաւ, կիրակի երիկունն, Դ (4) ռահաթին։ Խնդրեմ տեառնէ իմէ Յիսուսէ միջնորդութեամբ կուսին սրբուհւոյ նմայ կեանք պարգևեսցէ և մեզ բարի յիշատակ արասցէ։ Ուխտեալ եմ առաջի աստուծոյ, որ ամիսն մէկ պատարագի և Ժ (10) փարայ աղքատաց տամք, վասն հոգոց քաւարանի, քանի որ կենդանի մայ տամք և յետ անցման մերոյ, աստուած իւրն որչափ կենդանութիւն տայ և ինքն տացէ։ 105բ

Թվին ՌՃՁԱ (1732) ապրիլի Ա (1) օրն, որ օրն է շաբաթ լուսոյմուտն Ովսէփն մօրէն ընծայեցաւ և աշխարհ եկաւ։ Խընդրեմ ի տեառնէ իմէ Յիսուսէ, որ միջնորդութեամբ սրբուհւոյ կուսին Մարիամու և սրբոյն Օվսեփայ աստուածահօրն բարեխօսութեամբն տէր Յիսուս սմայ կենդանութիւն պարգևեսցէ. տարին Ժ (10) պատարագի տանք հոգւոց քաւարանին, քանի որ կենդանութիւն տայ աստուած նմայ և սայ տացի. մինչ ի խորին ծերութիւն։

Թվին ՌՃՁԳ (1734), մարտի Ի (20) օրն Խաթունճան խաթունն մօրէն ընծայեցաւ, երեքշաբթի կէս աւուրն և աշխարհ

եկաւ, տէր Յիսուս սմայ կենդանութիւն պարգևեսցէ միջնորդութեամբ սրբուհւոյ կուսին աստուածածնին և սրբուհոյն Կատարինէ ‖ բարեխօսութեամբն տէր Յիսուս սմայ կենդանութիւն 106ա
պարգևեսցէ. և սմա տայ տարին Ժ (10) պատարագի և հոգոց
5 քաւարանի, օժանդակութեամբ տէր Յիսուս կենդանութիւն տացէ սմայ և մինչ ի խորին ծերութիւն բարի կենօք հասուցանիցէ, ամէն։

Թվին ՌՃԶԴ[5] (1735) նոյեմբերի Է (7) օրն Թադուհին մօրէն ընծայեցաւ և աշխարհ եկաւ կիրակի կէս գիշերեն յետ, որ
10 կիրակի կու լուսանար, Թ (9) սահաթ և կիսուն. տէր Յիսուս սմայ երկար կեանք պարգևեսցէ մինչև խորին ծերութիւն, անսասան կենօք սրբութեամբ հասուցանիցէ, միջնորդութեամբ տիրածին կուսին և սուրբ Մաթէոսի աւետարանչին. և սմայ տացի տարին Ժ (10) պատարագի մինչև խս[ր]ին ծերութիւն, տացի
15 աստուծով։

Թվին ՌՃԶԵ (1736) նոյեմբերի Է (7) օրն. որ կիրակի լուսանար, Ժ (10) սահաթին, Գրիգորն մօրէն ընծայեցաւ և աշխարհ եկաւ ողորմութեամբն աստուծոյ. և սմայ տացի տարին Ժ (10) պատարագի. տէր Յիսուս սմայ երկար կեանք կենդա-
20 նութիւն պարգևեսցէ մինչև ի խորին ծերութիւն, բարի կենօք հասուցանիցէ միջնորդութեամբ սուրբ աստուած[ած]նին և սրբոյն Օհանու՝ աւետարանչին և սրբոյն Գրիգորի Լուսաւորչին և ամենայն սրբոց և սրբուհեաց բարեխօսութեամբ, ամէն։ Թվին ՌՃՂԱ (1742) ապրիլի Ե (5) օրն գնաց առ ստեղծողն իւր։

25 Թվին ՌՄԸ (1759)-ին, փետերվարի Ը (8)-ին օրը յաշխար[հ] եկաւ. Անդառան, տէր Յիսուս կենդանութիւն տացէ. ամէն։[6]

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույն հատվածը գրված է 102բ էջի ձախ լուսանցքում։

2. Բնագրում սկզբում գրված է «ՌՃԽԵ», այնուհետև վրան ուղղված է «ՌՃԽԱ»։

3. Արզրումի հրդեհին վերաբերող հատվածը գրված է 103բ էջի ձախ լուսանցքում, միևնույն ձեռագրով։

4. Այստեղից ժամանակագրության գրության ձևը փոխվում է, այն շարունակել է առաջին մասի հեվինակի որդին՝ Ուրախությունը։

5. Խնագրում գրված է «ՌՃԶԶ», այնուհետև վերջին թվի՝ «Զ»-ի վրա չեղյալ համարելու նշան է դրված, բայց իսկական թիվը չի գրված։ Նկատի ունենալով, որ նախորդ տարեթիվը նշված է «ՌՃԶԳ», իսկ հաջորդը՝ «ՃՌԶԵ», ուստի մոռացված տարեթիվը նշեցինք «Դ», այսինքն «ՌՃԶԴ»։

6. Սույն հատվածը բնագրում գրված է 105ա էջում, ուրիշի կողմից։ Ժամանակագրության հաջորդական կարգը պահպանելու նպատակով այն տեղափոխեցինք ժամանակագրության վերջում։